№ 15. Ապրիլի 26. — 1875 — Ապրիլի 26 № 15.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Արծրունու առն) և պ. Սատուրեանցի խանութում։

ՄՇԱԿ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումեն հայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիերէն, գերմաներէն և թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թանգութեան պատճառներ։—Ներքին տեսութիւն։ Առևտրական բանկի ժողով։ Նամակ Վէլիցիխայից։ Նամակ Մեծ-Շուլաէրից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Գերմանիա։ Պօրտուգալիա։ Պարսկաստան։ Թիւրքիա։ Նամակ Վիէննայից։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Նամակ Շամախուց։

ԹԱՆԳՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

„Մշակի“ անցեալ համարում ընթերցողը կարդացած կը լինի Թիֆլիսի քաղաքային վարչութեան կողմից արած ծանուցումն թէ հացի մազանդի անրնական բարձրանալը առաջ բերին և պահում են թանգութեան մէջ՝ Թիֆլիսի մէջ լոյս ընկած չարչիքը և այն հարուստ մոնոպոլիստները (մենավաճառները) որք էժան գնով մեծ քանակութեամբ առնում են հացը, թանգ գնով ծախելու համար։

Այդ տեսակ դէպքերում, ինչպէս միշտ, քաղաքային վարչութիւնը գործ է դնում այն միջոցը, որ միակ մնացելի է մի վարչութեան ու միակ իրագործելի է պաշտօնական հիմնարկութեան համար։ Քաղաքացու խը միջնորդելով գինուորական վարչութեան մօտ, առնում է նրանից պատրաստի գնով հացի մի յայտնի քանակութիւն և այդպիսով առաջն առնում է մենավաճառների ինքնակամ վարմունքին, աւելացնելով Թիֆլիսի վաճառանոցի վրա հացի քանակութիւնը, ուրեմն ստիպում է վաճառանոցի վրա եղած հացի գինը ցածանալ։

Քաղաքային վարչութենից այդ գործ դրած միջոցը 'ի հարկէ գովելու արժանի է, բայց արդեօք արմատական է նա և նրա ներգործութիւնը տևողական, թէ առերես և ըստ էութեան։

Հացի անդադար թանգանալու պատճառը մոնոպոլիստներն են, որք գիւղացիներից քաղաքից դուրս էժան գնով են առնում հացի մեծ քանակութիւնը և յետոյ թանգ թանգ են ծախում նոյն հացը քաղաքի բնակիչներին։

Քաղաքային վարչութենից արած տնօրէնութիւնը էժանացնում է հացը ըստ էական կերպով, բայց արդեօք կարո՞ղ է նա արգելք դնել չարչիքներին ուրիշ անգամ կրկնել իրանց շահաւէտ բայց հարստահարող առուտուրը։ Նա կարող է նոյն միջոցը գործ դնել, այսինքն ինտենդանտստվայի ամբարներից առնել հացի մի յայտնի քանակութիւն, բայց արմատախիլ առնել մենավաճառների վարմունքը նրա կարողութենից վեր է...

Ինչ է պատճառ, որ գիւղացին ինքն չէ բերում հացը քաղաքի մէջ, այլ քաղաքին չը հասած, ծախում է հարուստ չարչուն,—պատճառը այն է, որ գիւղացին բաւական համբերութիւն չունի։ Իսկ համբերութեան պակասութեան պատճառը ինչ է,—փողի, դրամագլխի պակասութիւնը։

Գիւղացին բաւական փող չունի, որ ինքն բերի իր արդիւնաբերած հացը քաղաքի մէջ, բաւական փող չունի որ բիսկ անէ քաղաքի մէջ մնալու ու իրան գնով ինքն ծախէ, կամ մէկին յանձնէ ծախելու։

Իւրաքանչիւր գիւղացու նիւթական, դրամական միջոցները այնքան թոյլ են, որ նա ինքն իր արդիւնաբերածը քաղաք բերելու, քաղաքում սպասելու, ու քաղաքի առնող (սպառող) բնակիչներին անմիջապէս ծախելու կարողութիւն չունի։ Այդ թոյլ, անպաշտպան դրութենից, ու գիւղացու տգիտութենից օգուտ է քաղում չարչին, իւրաքանչիւր արդիւնաբերող գիւղացուց առնում է հացը, ազատելով նրան ճանապարհի ծախսից և քաղաքում մնալու ծախսերից, հաւաքում է իր ձեռքում էժան գնով առնված հացի մեծ քանակութիւնը և ապա տեսնելով թէ նրանից կախված է քաղաքի բնակիչների վիճակը, ինքնակամ կերպով աւելացնում է գինը հացի վրա։

Հետևանքը ինչէ՝ այն է որ քաղաքային սպառող բնակիչների և գիւղական արդիւնաբերող ժողովրդի մէջ անմիջական կապը կտրած է. առաջինը թանգ վճարում է ամենաանհրաժեշտ պիտոյքի (հացի) համար, իսկ երկրորդը երբէք լիապէս օգուտ չէ քաղում իր արդիւնաբերածից։

Բայց ներկայացնենք մեզ, որ գիւղացին, որ ինքն բաւական միջոց չունի քաղաք գալու ու հացը ծախելու, միացած գիւղացիների ծախսով բերէր քաղաքի մէջ իր արդիւնաբերած մթերքը։

Ներկայացնենք մեզ, որ մի գիւղի գիւղացիքը, որոնցից իւրաքանչիւրը առանձնապէս կախված է չարչիքներից, ամենքը միասին հաւաքվէին ու իրանցից մի քանիսներին ընտրելով, ընդհանուր հաշվով ուղարկէին իրանց արդիւնքը քաղաքի մէջ ծախելու,—այն ժամանակ քաղաքն էլ ոչ թէ բօպէական կերպով կ'ազատվէր հացի թանգութենից, այլ քաղաքի և գիւղի մէջ կը հաստատվէին որոշ և տևողական յարաբերութիւնները։

Գիւղը կ'ազատվէր չարչիներից,—քաղաքը խեղդող թանգութենից։

Այդ բանը, որ միակ արմատական միջոց է արդար և հաստատ յարաբերութիւններ իրագործելու արդիւնաբերողի և սպառողի մէջ, կարող է իրագործվել այն միջոցների օգնութեամբ, որ „Մշակը“ անպաղար առաջարկում է հասարակութեան՝ հիմնել գիւղական փոխատու ընկերութիւնները։

Ժողովուրդը փողի պակասութիւն է զգում, նրան հարկաւոր է ժողովրդական կրէդիտ, էժան կրէդիտ։

Կրէդիտի օգնութեամբ նա այնքան ոյժ կը ստանայ, որ միջոց կունենայ ազատվել հարստահարողների ձեռքից, միջոց կունենայ ընկերակցութիւն հիմնել գիւղի բնակիչներից, որք միացնելով իրանց արդիւնաբերածը, կարողանան անմիջապէս քաղաքը հասցնել իրանց հացը, ծածկել ճանապարհի ծախսը և վարձատալ իրանց ուղարկած գործակատարներին։

Այդ բոլոր ծախսեր անելուց յետոյ, դարձեալ հացը էժան գնով կը ծախվի քաղաքում, որովհետև նա կը ստանայ որոշ, բնական գինը՝ ներկայացնելով հացի տեղական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

«Էդ ինչքա կարդում, մեր տղայ». յանկարծ լսուեց մին ձայն, երբ ես «Մշակ» լրագրի 9-րդ համարը քիւրսիի վրա դրած կարդումէի ու դառնալով դէպի այդ ձայնը, տեսի իմ վաղուց արդէն չտեսած չինական բարեկամներից երկուքը կանգնած կիսաբաց դրանս մօտ՝ նայում էին։ Հրաւիրեցի, որ ներս մտնեն։

—Ոտներնես ցեխոտ ա, նեռս կը մտնինք, էս ա, թող մին հալայ տըրեխնես հանինք... պատասխանեցին։

Գիւղական հիւրերս զրադէտ էին, բայց ըստ տեղական սովորութեան խօսում էին Ղարաբաղու բարբառ։ Երեկոյեան ժամու 7-ոդն էր, որ հիւրերս քիւրսիի տակում տաքացնում էին իրանց ոտները։ Լռութիւն էր։

—Պա (ապա) խէ (էր) էլ կարդում չես զաղեթդ... բօ... էս ա գլխումը գիրած «Մշակ». հէնց լաւ ա, նա մշակ, ես մշակ, մունք մին մինի հետ կը բարիշնինք, ասում էր մինը հիւրերից ծիծաղելով։

Շարունակեցի ընթերնուլ, բայց յօդուածը չաւարտած, ահա երկրեանն ես խնդրեցին լռել։ Կրկին լռութիւն։

—Բա, մշմփիւն (ափսոս), որ էն սուրբ տաւերովն ա գիրած իմի պիղծ բէնները, խօսում էր միւսը, պա իմի զատերը, որ գաղեթում գիրվի, ես մըչունք (այնքան) կասեմ, որ հաւատա, օխսը գաղեթ գեռնայ, ամմայ դէ ոնց անեմ... գիրիլը լեաւ գիւտում չըմ։

Երկար խօսակցութենից յետ կրկին խնդրեցին շարունակել ու վերջացնել։ Վերջացաւ յօդուածը։

—Մին ասէ, ջանը քեզ մատաղ, զարմանալով հարցնում էր ինձանից մինը, էդ ով ա գիրում իմի (էդպէս) խօսքերը։—Ուսումնական և գիտնական մարդիկ, պատասխանեցի ես, ցուցանելով խմբագրի ստորագրութիւնը։

—Լեաւ, պա դրանք, որ գիտումին մեր հոգևորականների արարմունքը, պա մեծ մարդիքըն, խէ մեզ մին ճար չեն անում—թողալըն նրանց ձեռքին ետիր (գերի)։

—Դու էդրա ասում, յաւելացնում էր միւսը, հանց էդ գիրողներն էլ մեզ նման քաչվումըն նրանցան ա, տեսնումըս էն որ ինդի մըչունք (էնքան) խօսում ա, իսկի մինին անում մը տամ ա, իսկի նրանց մինի փամիլան աչկարա անում, հանց գիրում ա թա (թէ), հոգևորականները իսաի ըրեն, ինտի ըրեն մին քըհանայ դէս քինաց, մին աբեղայ դէն քինաց, պա մըհէնկ (հիմիկս) մունք դրան ա ինչ գիտանք թա նրանք ովրն, ինչ տեղացէ ըն, ասա, անումը գիրի, անումը, հանցու որ էլ անէ ոչ... հըմանչի (ամանչի)։

—Պա մըհէնկ էն խեղճ գիրողը քանէ մինի անումը գիրի, ասում էր մինը, հանց լօխ (բոլորը) էլ մինը մին ան բէթարըն. ինչ, ճար չկայ, աւետարանը ասում ա, նրանց ասածը ըրա, ըրածը անել մի, մունք էլ մնացալընք մաթալ։

—Ըղորդըս ասում, յարմարացնում էր միւսը, հրան մեր չէնին դէրին բէնը (բանը), սաքի հվ չի գիտում... ամմայ ինչ անիս, կասիս վայ ա, ասել չես, վայ ա, օխտանասուն տարվայ քհանայ ա, երեսուն—քառասուն տարէ ա կնէկը մեռած, տեսնումըս ինչ բներ ա անում, պա ինդի քհընու հալ կը լինի. մը հէնկ էլ բերալ ըն սիլեստի անում, սիլեստի անում... ամմայ դէ խեղճ աղջիկը բիարուռ եղաւ պրծաւ... էն օրը ասումըմ, տէրտէր, պա մռնըլական չըս... ծիծաղում ա, հր, ասում ա, քինանք գիրեզմանուտը, ինձ մեղաւորն ու արդարը նշանց տու, տեսնանք որի գիրեզմանն ա քաչ, որինը բեցիր, որ ասինք էս մեղաւոր ա, էն արդար։

—Մեղքը մեզանում ա, կրկնեց մինը, մեղքը մեզանում ա, մունք խէ թողումընք նրա... չէնումը, որ մեր օղլուչաղը բիարուռ անէ, տէրին գնէկը որ մեռաւ, ես պէտի կնէկ առնէ, ես իսկի էլ նրա օրհնիա տէր չասիս, ամմայ դէ մեր կղանէն ովա սխտոր կտորում, օրհնըվիլիս մունք (մինք) հարկաւոր ընք գնամ, լիհայ որ բէնը պըրծնում ա, էլ քէչի հանդայ, դայայ հանդայ...

—Էդ ըղորդ ա, ըղորդ, զայրացած խօսում էր միւս հիւրս, պա մունք հեր քեցէնք, էդ լօխ վրդըպետին ըսեցինք թա, հայր սուրբ, ախր ձեռք ա քեցէնք, դէ մին ճար... մունք խօսում չընք, սուս ընք անում (լռում ենք), նրանք էլ հանց ըն գիդում, թա, գեռանը գիւլին հետ ըրածում ա, դէորը...

—Ըմմ... վէզըդ կատու ծամէ իսդի մարդ... ադայ, ախր հիւր (հում) ասիս, հանց հաղր համ քաղաք տեղ, համ էլ վրդապետին աչքէն ռաջկէն, պա մըհէնկ սկացեր ոչ, որ ասում են թա, մին Շամախեցէ դէր քեցալա մին մռնու (մեռելի) գերեզմանաքարը թաղուն դարալ իւրան ախբորը վերայ քցալ, պա վրդապետը սկացալ չի..պա խէ մին գիլան չանում... հանց հաղր գաղեթումը ասում ա թա նրանք (վրդապետները) կշառաւ տեղն ստանում, կշառաւ էլ տեղ տամ. ախ, դու էլ գիտում չեմ թա, ինչըս կորցըրալ, ինչու ըս շոռ գեամ...

—Բօ... ինչըս ասում, այ անաքանդ, գերեզմանէն քարը հէնգ—վեց ջօխտ (զոյգ) գիւմաչաւ տանել չինում, պա մին դէր հունց կը տանէ ինդի զէռ (ահագին) քարը... վալլահ, ինչ որ ասիս էդ կրդացողներան դուս կը գեայ։

Դրանից յետ միւս հիւրս խնդրեց իւր փոքրիկ առակին ուշադրութիւն դարձնել։

—„Մին միլքեադար (կալուածատէր) ունէր մին ջօխտ, մինը սև միւսը սպիտակ եղներ, էս մարդը տուալ ար մին մշակու, որ իւրան մայրան վարէցանէ։ Անցնում ա մին քանէ վախտ ամմայ մշական մին խաբար չինում, վերջապէս եղնատէրին ճարը կտրուած, քինամ ա մշական հալ—օվհալ իման ա. բիրդան (յանկարծակի) տեսնում ա, որ մշակը եղներէն թակում ա սպանում։

—Ջանըմ, սաստում ա եղնատէրը, եղներըս խէ կտորումը։

—Պա ոնց անիմ, աղայ, ասում ա մշակը, լիածը տափեն ա մնացալ, քինամ չըն վարում չըն... պա ոնց անիմ։

Եղնատէրը տեսնում ա, որ եղներն մինի գըլուխը դէս ա լծած, մինինը դէն։

—Դու անգլուխ, կզնըվում ա (բարկանում է) եղնատէրը, պա էլ ոնց վարին, խեղճերեն մինի գլօխը դես ա լծած, մինինը դէն։

—Ախ, աղայ, գլօխը տիրիւն ա տամ (չարժում է մշակը, գիւռում չըմ, եսըմ պել (յիմար) թա դու „դէս ու դէն“ ես գիւռում չեմ, տեսնումըս էս գլօխը դէպի մեզ աչքերը պլըզած սև եղնը, ինչ որ անում ա, էդ ա անում, թա չէ, հանց էն խեղճ սպիտակ եղնը գլօխը քաչ իւրան լծէն ձիգ ա տամ։—Լեաւ, մըհէնկ մսէ, տեսնամ, հարցնում էր հիւրս, մեղաւորը հվ ա, որ լիածը մնացալ ա տափէն։

Ես խնդրեցի, նախ՝ պատմել իւր առակի իմաստը և ապա հարցանել։

Մշակ հիւրս առակին մշակի պէս, գլուխը չարժելով ասաց, ախ, անումն էլ կրդացող ա դրալ և ապա պատմեց յետագայս։

«Եղնատէրը Աստուած ա, սև եղնը հոգևորականն ա, սպիտակը ժողովուրդը, մշակն էլ մեր բախտն ա, մայրան էլ աշխալքս ա»։

Ց. Մ. Ս.